

ԲԱԺՆԵԳԻՆ


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 Լ.
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 Փր
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Դրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Դրշ. ողջ

ԶԱՐԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄ. 12 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1903

ԹԻԻ 281

ԲԱՐԻՁԻ ՄԵԾ ՄԻԹԻՆԿԸ

(Մեր մասնաւոր քղաքական)

Բար/գ 27 Հոկտ. 1903

«Երկու օր առաջ միջազգային մեծ միութիւնը տեղի ունեցաւ Սարա-Պէրմարի թատրոնին մէջ, ի նպատակ Հայերու և Մակեդոնացիներու միութիւնը կազմակերպութեամբ էր Բրո Արմենիայի խմբադրութեան կողմէ, որուն ամենէն շեմուածն աշխատողն էր Տոքթ. Լօրիս Մէլիքօֆ:

Միութիւնին մասնակցած էին Անգլիացի, Իտալացի, Պէլթ և Ֆրանսացի երեսփոխաններ ու դիւանագէտներ: Նախագահն էր Ֆրանսիս տը Բրէսանսէ, հայասէր երեսփոխանը որ Թաննի ալ քաղաքական բաժնին աշխտակիցն է:

Միութիւնը սկսաւ ժամը 3ին քառորդ մնացած, նախագահը բացատրեց գումարումին նպատակը, Աւստրո-Ռուսական ծանուցադրին անբաւականութիւնը ապացուցանելով բոլոր թէ՛ «Աւստրիա նրպատակ ունի Սեւանիկ իջնալ, իսկ Ռուսիա՝ Միջերկրական», և նախ խօսքը տուաւ Բրո Արմենիայի խմբադրութեան Պ. Գրյարի, որ Հայկական խնդրոյն լուծման համար երեք միջոց առաջարկեց. 1. կամ Թուրքիոյ բռնած հայաջինջ դժբախտութիւնը, որով Հայ տարրը լմնալով Հայկական խնդիրն ալ ինքնին կը վերջանայ. 2. կամ Ռուսական տիրապետութեան ներքեւ դնել Հայաստանը, բայց այս ալ անկարելի է, քանի որ Ռուսիա Հայոց ունեցածը չունեցածը կը յափշտակէ և նիւթապէս հայերը կը ջնջէ. և 3. կամ Պէրլինի դաշնագրին 61րդ յօդուածը դործադրել, քրիստոնեայ կառավարիչ մը դնելով՝ ողջակի պատասխանատու եւրոպայի:

Մտաւարտութեանց մէջ վերջացուց ճառը, որուն յաջորդեց Վիքթոր Պէրար, Լ'Առմենիի աշխատակիցը որ Սօրպոնի մէջ ալ դասատու է:

Այս ալ խօսեցաւ զուտ Մակեդոնացիներուն վրայ և անոնց կրած տառապանքը նկարագրեց. ապա ժօրժ Պէլթ երեսփոխանը խօսեցաւ, որուն յաջորդեց Լիոն քաղաքէն եկած պատգամաւորութեան մէկ անդամը, որ ի մէջ այլոց բաւ թէ՛ առջի դիշեր Լիոնի մէջ 4000 հոգիի հաւաքում մը տեղի ունեցեր է, ի նպատակ Հայոց և Մակեդոնացւոց, եւ իրենց որոշումը՝ թէ «պէտք է անհրաժեշտաբար դործադրուին Պէրլինի դաշնագրի 23 և 61րդ յօդուածները», արտաքին գործերու նախարարին զրկելէն յետոյ զինքը պատգամաւոր ընտրեց եւ յաջորդ օրը գումարելի այս միութիւնին, և աւելցուց թէ դաւառներն ալ համակարծիք են կեդրոնին և կ'ուզեն որ ժամ առաջ վերջ գտնեն Հայ և Մակեդ. խնդիրները:

Յետոյ Մըթր Պիքսըն Պալման միութեան նախագահը ֆրանսերէն խօսեցաւ և ըսաւ թէ Պ. Պալմանը ըսած է որ ինք կ'ուզէ միջամտել մակեդոնական խնդրոյն և թէ շատ անբաւական կը գտնէ Աւստրո-Ռուսական ծրագիրը, բայց պէտք է

որ Թրանսա և Իտալիա իրեն միանան։ Ապա հը-
րախրուեցան Իտալացի երեսփոխանները ու յայտ-
նեցին թէ Իտալիա շատ համակիր է Հայոց և
Մակեդոնացւոց և անոնց աջատու թեանը կը բազ-
ձայ . ատենաբանները յայտարարեցին նաև թէ
ի շնորհս Լորիս Մէլիքովի, Միլանի, Հոովմի, ձե-
նովայի մէջ և այլուր 4-5 հաւաքումներ տեղի
ունեցած են ի նպաստ Հայոց :

Այնուհետև խօսեցաւ Ժօռէս, և ունկնդիր-
ներուն վրայ ըրաւ այն ազդեցութիւնը ինչ որ
կընէ երեսփոխանական ժողովին վրայ : Ժօռէս
հիմն դնելով իր բանախօսութեան Թրանս-Անգլ-
Իտալական մերձեցումը, և այդ երեք ազգերու
ժողովուրդին միացումը առ հասարակ ամէն խըն
դրոց, մանաւանդ Հայկական և Մակեդոնական
խնդիրներու առթիւ, ըսաւ թէ «Հայաստանը և
Մակեդոնիան պէտք է ունենան իրենց վրայ մէկ
մէկ քրիստոնէայ կառավարիչ, ուղղակի Եւրոպայի
պատասխանատու և ոչ թէ Սուլթանին» :

Յետոյ վերջին խօսքը տրուեցաւ Պ. Տէթուռ-
նէլ տը Քանթանի, որ Թրանս-Անգլիական մեր-
ձեցումը յառաջ բերողն է, այն ալ մեր ազա-
տութեանը փափաքով՝ ինչ որ պէտք էր ըսաւ և
որ կարգաց միթիւնկին այն բանաձեւը զոր հե-
տեւել օրը Թրանսայի արտաքին գործոց պաշ-
տօնեայ Պ. Տէլգասէի պիտի մատուցուէր, և որ
ըստ առաջարկութեան նախագահ Թրանսիս տը
Բրէսանսէի, բուէի դրուելով միաձայնութեամբ
ընդունուեցաւ :

Միթիւնկը ցրուելէ առաջ շնորհակալութեան
քուէ մը տուաւ տիեզերահռչակ գերասանուհի Տի-
կին Սառա-Պէլնարի, որ իր թատրոնը անձնուի-
րաբար Հայկական դօմիթէին տրամադրութեան
ներքեւ դրած էր :

Սոյն հաւաքումին 2000 անձինք ներկայ գըտ-
նուեցան :

ԱՉԳԱՅԻՔ

Էջմիածին զինուորներով պաշարուած է :

Վեհ. Հայրապետը նամակ մը գրելով Զա-
րին, յայտարարած է որ չէ կարող դաւաճանել

իր երգումին զոր ըրած է օծուելու օրը, այն է
պաշտպանել Հայաստանեայց եկեղեցին և անոր
ունեցած իրաւունքները : Այդ նամակը նմանո-
ղութիւն ունի եղեր Քրիստոսի Գէթսեմանեան
այդիի աղօթքին :

— Եկեղեցապատկան կալուածներու յափշտա-
կութեան խնդրոյն առթիւ մատնութիւնները
նոյ Ռուսահայ երկու քահանայ, երկու աշխար-
հական և երկու ալ թուրք լրտեսներ յատկապէս
կարգուած ահաբեկիչներու միջոցաւ շանսատակ
եղած են :

— Ի նպաստ Որբերու Յանձնաժողովին, Ժա-
նօթ դեղադիր Թահթաճեան Խաչիկ Էֆ. ի կողմէ
պատրաստուած ընդարձակ Գեղադրութեան տետ-
րը՝ տպարանապետ Սէրվիլէն Էֆ. վեհանձնաբար
ստանձնել է տպագրել, միմիայն թղթի ծախուց
փոխարինութեամբ :

— Պաշտոյ մէջ հրատարակող Մանգուսէի Էմ-
ֆեար հայերէն լրագիրը բոլորովին խափանուե-
ր է, շնորհիւ արտասահման գտնուող իւշիկազար պա-
րօնի մը, որուն նոյն խմբագրութեան հասցէին
ուղղած յեղափոխական մէկ նամակը կառավարու-
թիւնը ձեռք անցուցեր է : Ասով, այդ պարունը
թէ՛ ազգօգուտ թերթի մը խափանուելուն, թէ՛
խմբագրի մը կործանման և թէ՛ տպարանի մը աշ-
խատաւորներուն դժբաղդութեանը պատճառ ե-
ղած կըլլայ : Երեսը ճերմակ մնայ :

— Աւետիս Նաղարեկի վրայ սպանութեան
փորձն կատարուած է կիրակի գիշեր ժամը 11ի
ատենները, միջահասակ և թխագոյն անձի մը
կողմէ՝ սր քանի մը անգամ յարձակելով անոր
վրայ ուսին և ճակտին դաշոյնի երկու հարուած
իջեցնելէ յետոյ փախեր է :

— Պօթոն հրատարակող «Երիտասարդ Հա-
յաստան» խմբագիր Սապահ-Քիւլեանի (Կիւրեղ-
եան) բնակարանը պոմպա մը զրկուեր է որ 2
ժամէն պիտի պայթի եղեր, տանտէրը կասկա-
ծելով, անմիջապէս ոստիկանութեան կիմացնէ,
որ թէ՛ պոմպան կը տանի և թէ՛ զրկողը կը ձեռ-
բակալէ :

—Անգլիայէ Ամերիկա գացող Վահան Գրի-
գորեան անուն անձ մը որ իբր մարդասպան ձեր
բակալուած էր, անպարտ արձակուերէ, իր մա-
սին եղած ամբաստանութիւնները չի հաստատ-
ուելուն համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ և Աւստրիոյ ներկայացուցած նոր
ծրագրին էն նշանակելի կէտը սա է որ, Մակե-
դոնիաի յեղափոխականներու պահանջին հա-
մեմատ յիշեալ երկու տէրութիւնները Եւրոպա-
կան դոնթրոլի պէտքը զգացած են:

—Հօկո. 30ին Մակեդոնացի երկու հազարի
չափ փախչողականներ գիշեր ժամանակ հետիոտն
Փիլիպէ հասած են խիստ թշուառ վիճակի մէջ.
Պուլկար կառավարութիւնը անոնց բնակութեան
և անունդի մասին պէտք եղածն անմիջապէս ի
գործ դրեր է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԱՐՁԱԿ ԶՈՊԱՆԵԱՆ

Արշակ Զօպանեան, բանաստեղծ, գրագէտ,
ֆաղափազէս, խմբագիր Անսիսի: Կըսուի թէ
աշխարհ եկածին պէս մօրը հետ վիճաբանութիւն
մ'ունեցած է սա պատճառաւ թէ ինչո՞ւ փոխա-
նակ Բարիզի պէս տեղ մը աշխարհ բերելու «բար-
բարոս» երկրի մը մէջ ծնած ու այսպէս նախա-
ած է զինքը: Կըսուի նաև թ, գայեկը Արշա-
կին բերնին ձեռն գուշակութիւն մ'ըրեր է ըսե-
լով, «Աս տղան շատախօս մը պիտի ըլլայ»: Ա-
սիկայ իմանալով Արշակ կստիպուի դայեկին հետ
վիճաբանութեան մտնել, և կ'որոշէ գայեկէն վը-
րէժ լուծել անոր գուշակութիւնը ի գերե հա-
նելով, այս է պատճառը որ փոխանակ շատ խօսե-
լու, շատ կը գրէ:

Ներկայ հայ գրագէտներուն մէջ ամենէն ա-
ւելի ազմուկ հանողն եղած է Արշակ Զօպանեան,
թէ և իր ըսածին նայելով իր գրածներն են որ
ազմուկ կը հանեն, ինչպէս կը գրէր իր մէկ յօդ-
ուածին մէջ, «կոտորածներուն վրայ ֆրանսերէն
գիրք մը հրատարակեցի որ շատ ազմուկ հանեց»:
Բայց ինչ որ անտանելի է իր գրութեանց մէջ
իր ծայրայեղ յաւակնոտութիւնն է և յակնոտու-

թենէ անելի բան մը կայ իր սա բառերուն մէջ,
«Իմ գրական գործունէութիւնս . . .» Ետու թիւն
կը հոտին իր ըլլոր գրութիւնները, այսուհան-
դերձ գէշ գրող մը չէ թէ և իբրեւ հրապարակա-
գիր իր տեսութիւնները քիչ մը խակ կը թուին
ինձ, թերութիւն մ'ունի որ շատ երկարաբան է,
թէ և ինք ատոր մէջ արժանիք մը կը տեսնէ եւ
այդ պատճառաւ կտրուկ գրուածքներուն վրայ
արհամարհանօք կը նայի: Ազատ Խօսքը «բուրժի
կտոր» մը կ'անուանէ և սակայն այդ քորջի կտո-
րին կարեւորութիւն տալով կը պատասխանէ: Ու-
րիշ մըն ալ զինքը ճանճի տեղ կը դնէր և սա-
կայն Խարազանով իր վրայ կը յարձակէր:

Գրող մը ըլլալը չենթադրեր խորհող մը ըլ-
լալ, հպարտ, յաւակնոտ գլուխ մը չկրնար բնա-
կարանն ըլլալ խորհող մտքի մը:

Նուպար փաշայի պէս մէկը իր բարեկամը
կ'անուանէր, թէ և իր և անոր մէջտեղ ու է հա-
մեմատութիւն չկար: Մեծ մարգիկ իրենց խոհա-
րարին հետ ալ կը տեսնուին և բարեկամ ալ կը
կոչեն զանի: Բայց ենթադրեցէք թէ փաշային խո-
հարարը ըսէր, «բարեկամս Նուպար փաշան ֆը-
րանսական խոհակերութեան կը հաւնէր, ես ալ
արեւելեանը կը նախընտրէի, այս պատճառաւ
տարակարծիք էինք և կը վիճէինք . . .»:

Զղարմանաք եթէ օր մըն ալ գրէ, «բարե-
կամս Լամարտօֆ կոմսը, կամ «Վեհ. բարեկամս
Ռուսիոյ կայսրը»:

Միմոսի մը և մեծամիտի մը մէջտեղ սա
տարբերութիւնը կայ որ առաջինը գիտէ թէ ու-
րիշները կը խնդացունէ իսկ վերջինը չգիտեր:

Շէյքսպիրի համար կ'ըսուի թէ այնպիսի ե-
րեակայութիւնով մը օժտուած է եղեր որ նկա-
րագրելու համար անտառի մը վիճակը կը բա-
ւէ եղեր իրեն տեսնել անոր ծառերէն մէ-
կուն ճիւղը: Կըսուի թէ Զօպանեան ալ այն-
պիսի կարողութիւնով մը օժտուած է որ հասկը-
նալու համար գրութեան մը արժէքը կը բաւէ
իրեն կարգաւ միայն անոր հեղինակի անունը . . .

Միջահասակ, համակրելի գէմքով, ոչ-հա-
մակրելի բնութիւնով անձ մըն է Պ. Զօպանեան:
Գլուխը բանաստեղծ մը ցոյց կուտայ բայց ձեռ-
քերը «մի խաբուիք» կըսեն: Նայուածքին մէջ
բան մը կայ երբեմն որ կը նշանակէ «ինձի պէս
գրագէտ տեսած ունիք», իսկ քալուածքը կը յի-
շեցունէ վարտիքին կապը ձեռքը բռնած քալող
տղայ մը:

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

«Եթէ ԳՈՐԾԵՐԸ ԲԱՑՈՒՆԻՆ»

Պ. Մանէ, որ կայտառ երիտասարդ մէջ, գեղարուեստի հետեւող ու վարպետ ալ կօչկակար, փոփոխամիտ բնաւորութիւն մը ունի. Գեղեցիկ օրիորդի մը հանդիպածին պէս՝ իսկոյն զայն կը սիրէ ու քայլ առ քայլ անոր կը հետեւի, մոռնալով Տ օր առաջ տեսած ու խենդեկալու աստիճան սիրած ուրիշ չքնաղ մէկ արարածը ու անոր տուած խոստումը. ու մեծ իրարանցումով կ'սկսի վերջնային ծանօթը կամ մէկ մտերիմը փնտռել, անոր վրայօք տեղեկութիւններ առնելու համար. վերջապէս կը մտադրուի այդ օրիորդը առնել, միշտ կրկնելով թէ՛ «ինքը գեղարուեստի հետեւող մէջ, կօչկակարութիւն ալ կընէ որով կրնայ լաւ մը ապրուիլ», Շատ անգամ զպրօցական տըղայ մ'ալ կը դռն. որ երկու կողմի բարեներք կը տանի կը բերէ անգիտակցաբար, որուն կը յաջորդեն թղթակցութիւնք և երթեկութիւնք որ մինչև քանսօնիկութեան կը յանգի, ու այսպէսով սիրոյ կրակը կ'սկսի բորբոքիլ ենթակայ հէգ աղջկան սրտին մէջ:

Մեր պարօնը, ապագայ վարուցը իբր օրինակ, իրիկուան կանոնաւոր տուն կը վերադառնայ, առանց ու եւ զքօսատեղի դիմելու, ու շատ անգամ սիրուհւոյն հետ պտոյնի կենէ, անոր մէջ մի փարտուքը վայրկենապէս կատարելով, բայց դժուարամտաշելները ճարպիկօրէն յետաձգելով: Այսպէսով 3-4 ամիս կը շարունակէ այս սիրային հեշտ կեանքը, բայց յետոյ՝ ինչպէս օր ըսինք, կ'սկսի հեռանալ այն արարածէն զոր հոգիին պէս կը սիրէր ու վերջապէս ամենաջնջին պատրուակաւ մը կուի մը կը հանէ, կը սրդողի ու անտուկը առնելով կը հեռանայ, ուրիշ մը ձեռք ձգելու համար. նորէն սկսելով խուզարկութիւններու:

Այս բարեձաղիկ պարօնը, վերջին անգամ Տիկին Մոնոնիկին տունը քանսօնիկ ըլլալով, ըստ իւր քարի սովորութեան սիրահարուած էր

անոր աղջկանը, որու հետ պիտի ամուսնանար՝ «եթէ գործերը բացուէր»:

Առտու մը օրիորդին մեծ մայրիկը՝ Շաման-թաղ իրաթուն, իր հարսին տիկին Մոնոնիկի հետ կը խօսէր այսպէս.

— Ի՞նչ եղբորմ, աս հինգ ամիս է, հընկ մընկ ընելով պիտի առնէ՞մերուն սօնը չեկաւ, չօճուխըս (թոռը կ'ակնարկէ) օր օրի կը զայնի՞նայ կոր. թամ էրիկ մարդու մը պէս չէ՞ք շնորք ճուղապ մը տուած չունի որ դուն ալ ընելիքդ գիտնաս:

— Ի՞նչ կրնամ ընել, մայրիկ, իր խօսքին նայելով, իլլէ պիտի առնեմ կըսէ. գործերուն բացուելուն կը նայի կոր:

— Ի՞նչ ճա՛րմ, քէսէն քէս մեղի ճուղապ մը ետխօտ խօսք կապ մը տալ տէ՛ կէնէ ճանըմ կէնէ կէօշլւմ:

— Աղէկ կըսես ամա, ո՞վ տառնկ խօսք մը պիտի կրնայ բանալ իրեն. ես չեմ կրնար ընել:

— Ես կրնամ ընել. հէմ քէք աղւոր կընեմ, առջևը պիտի կլտորիմ, միտքը հասկնամ քի անոր կէօրէ տալքանմիշ ըլլանք. կէօզ կէօրտիւղինտէն գօրգար կըսէ, ետ՛վրում, Բիբիստենց Սիմաին աղջիկը աչքերնուս առջին է. քէօրէկին տղան տարի մը տուններին նստաւ, այսօր վաղը պիտի առնեմ ըսելով վախթ մը ետքը ճայմիշ եղաւ առաւ քալեց. զաւալը աղջիկը երեսի վերայ ձգեց. հիմա սէմթէրնին հանդիպող մը չըլլար կոր. անոր պէս տահա քանիններ կուզես քիցուցունեմ:

— Անանկ է ամա՛ նայինք աս ալ անոնց պէս է:

— Ի՞նչ գիտնամ չըլլալը. խալուն չէ քի հոտուըտաս, Ինձի մնայ նէ՛ աս իրիկուն գալուն պէս մէկդի կը քաշեմ, միտքը ինչ ըլլալը կը հասկնամ:

— Գուցում մայրիկ, չելլաւ բարկացնես տէ գլուխը առնէ երթայ, ամսական իրեք ըսեալ կառնենք կոր, վրայ կուտանք:

— Հոգս, իրեք ըսեալը վրայ չի տալու համար թոռանս էօմը վրայ պիտի տամ. հէմ քեզի շիտակը ըսեմ հարս, Սուրբ հոգիս կը վկայէ կոր քի՛ աս տղան աս աղջիկը չպիտի առնէ. տալքանչին չեմ հաւնիր կոր. առջի պէս սիրտը վրան տաք չէ. անոր համար մէյ մը ես իրեն

Հետ տեսնուելու եմ:

— Դուք դիտես մայրիկս, Զապէլը իմ զաւակըս է նէ՛ք, քու ալ թողդ է. հէլպէթտէ անոր գէշութիւնը չես ուզեր:

Այս որոշման վրայ նոյն իրիկունը երբ Պ. Մսեհ տուն վերադարձաւ, մամիկը զայն իր քովը կանչեց:

— Եկու եավրում, քեզի ըսելիք մը ունիմ:

— Ի՞նչ է ան մեծ մայր:

— Եավրում, հայրսն բերանը չէքմէ պիւղմէ, չէ քի ուղած թարափս քաշեմ, թիւրլիւ թիւրլիւ բաներ կրսն կոր. մենք քու վրադ էմնիյէթ ունինք ամա՛ սա կուզենք քի գործը սաղ իազըլի մը կապենք, հէմ քեզի համար ազէկ է հէմ մեզի. ըսել կուզեմ քի հիմա գուն աս ազլիկը առնելու միտք ունիմ:

— Ի՞նչ ըսել է. տահա կը կասկածի՞ք վրաս, չորս ամիս է մէջերնիդ եմ:

— Մէյ օղջ ըլլաս, մէջերնու չեղլաս ամա՛ սանկ քէսէն քէս խօսքը կտրես լմնցունելու ես:

— Ես խօսքս լմնցուցած եմ, գործերը բացուելուն պէս. նշան պիտի տամ, հարսնիքը ընեմ, գործերը չի բացուին նէ բան մը չեմ կըրնար ընել:

— Խօսք է կընենք կոր ես՝, բերանս չորնայ ամա՛ ատ գործերը տարի մը տահա չի բացուին նէ՛ տապալ մեր գլխուն ի՞նչ գործեր պիտի բացուին:

— Ի՞նչ ըսել կ'ուզես կոր:

— Զիւնքիւ, եավրում, չօճուիսը օր օրի կը զայիֆնայ կոր. ասէթ է քի՛ սօանկ միտք մը ունեցողը սահաթ մը առաջ անգին ասգին կիյնայ գործը սըրայի կը գնէ:

— Ի՞նչ ընեմ. գործերու բացուելուն կը նայի՛:

— Կէնէ քու մախամըդ կը զարնես կոր. միւ չէվէշ խօսքեր մ'ըներ եավրում:

— Ուրիշ ի՞նչ կընամ ըսել. աս բանը ըլլալու համար գործերու բացուելուն կը նայիմ. հասկցա՞ր:

— Բէք ազէկ եավրում. խըրսլանմիշ մ'ըլլար. իշալլահ գործերդ կը բացուին՝ ըսելով մամիկը խօսքը կարճ կը կապէ:

...

Հետեւեալ օրը, ցորեկին, Պ. Մսեհի աշխա-

տած խանութին առջև բեռ կրող կառք մը եկաւ կեցաւ որուն մէջ սնտուկ մը ու վերմակ մը կար. և կառապանը Պ. Մսեհին յանձնեց հետեւեալ երկտողը:

Պ. Մսեհ.

«Վերմակդ ու խրթըդի սնտուկդ քեզի կը զրկենք. մինչև որ «գործերը բացուին»:

Մամիկը աշատած էր թառնիկը:

Սուգ ել ժրթըրք



Գեթօն աղա. սեն սէ քիսնիֆօ պիլեթի աշքըն մը:

— Խաչր. Եօյթ շէյ իշիւն քարա վերմեմ.

— Էյի անմա՛ պախրըր քօվա իքմէֆ իշիւն պիր սեմա օրումն արնալըսըն.

— Պեն օ քօվալը վագրընսա իքմիշ վէ աղզընըն սաքընը ալմըշըն սըր

— Նէ՛ վագրք.

— Էյէնիսիլիս վագրք.

— Խաչիկ աղա, պու մաֆեթիմիզի ֆիւնէ եաքսրսընըզ.

— Դերզի ուսքա Պ. Էգնաեա. Էննա՛ մը օլմուշ.

— Ֆենա սէյիլ անա, քալեօռու պիր ազ ուզումն օլմուշ.

— Պէյիս եօզ. պիզ սէ օնա քարա վերմէյի ուզաքընեօրըզ.

— Լեւոնիկ, իշիքսիմ ֆի միքեվեմա սալընըզ պիւն յիւալըզ պիր իրաւս պրագմըշ.

— Էվվէթ Եօյթ սիր.

— Օ սերեմէ քամահֆեար իֆենն մաւրը իքսի պու շէյի.

— Նէ՛ շաշքեօրումն. պերապեր կեօդիւրեմէսիդի իշիւն պրագսը:

ՏՊԱՐԱՆ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Գահիրէ

Աղեքսանդրիայ «Մուգալա» քէօրրիւ ճինայեթիւն հերոսը ասկէց ալ մեկնեցաւ նմանօրինակ մանօյնայով զոր ի գործ դրած էր Աղեքսանդրիայէն կծիկը դրած պահուն:

Ռամէ

Կանացի զարմանալի հիւանդութիւն մը երևան ելաւ. երբ էրկանը հետփառաւորտուն մը բնակի, օրերով գլուխը բարձէն վեր չեղնէր, իսկ երբ բարեկամին հետ չարսախ մը նստի, հիւանդութենէն չի մնար հսէր

Պարզիկա

Գարեջուրի գաւաթներու ճարճատմանց ներդաշնակութեան միջոցին որոշուեցաւ երեկոյթ մը սարքել ի նպատակ համակրելի հիւանդին (?), որ թէնցարգ հաղար նազերով, հոգի հանելնէրով կը մասնակցէր երեկոյթներուն, բայց տեսնելով որ այսօրերս մրցակից մը երևան եկած է, որ քոթխումնիական մանօյրաները անյաջողութեամբ պիտի մատնէ, զայն հալածելու համար որոշեց վայրկենապէս բժշկուիլ: Ու բժշկուեցաւ հրաշագործ զօրութեամբն. . . Գարեջուրի:

Սաբաֆիյէ

Վասն պարագայ մնալոյ տեղւոյս գրեցաւ.

Ծննդի

«Հայեղի»ի սպարանի մեքենային անխոր դարձնող պէտեցի Մօհսսմէս պիւրի Հասանին տրուան իր Երդ մանկ զուակը ունեցաւ. Տուն տնտրոջ քաջաւորը վիճակի մէջ եւ.

Բոժ. — Հապսիս զրթըղընսա՝ ասմալար պուսալիւ:

ՍԱՐԳԻՍ ԲԱՇԺԵԱՆ

Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան քե, երկարժամանակ յԱՆԻՖ Սիւնկերի մեքենայի գործարանին մէջ աշխատած ըլլալով, հիմա եկած ու հաստատած է Եւրա Զապրիէի գրայ, Սուր-էլ-Թապալիսին. եւ կը նորոգէ կարի ու կոշիկի մեքենաներ եւ ամէն տեսակ գործիքներ, խոստանալով գոհացնել իրեն դիմողները:

4

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

Ի

«Հայեղի»ի սպարանին մէջ դիւրանաւորի գնով կը սպագրուին առեւտրական տներու հաւար ամէն շնորհ: Բարիգեան վերջին դրոթեալք հե-
սախրաւարժ, պատկերազարդ եւ գունաստր փո-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշ-
ցեմոս, հասցեսոս, հարսանեկան հրաւիրագիր
մահազդ, նամակագրի, պահարան, տնտակ եւն
Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւն
ալ փութով կը կատարուին:

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԵՕԶԵՍԻ

Սուր-էլ-Թապալիս

Կը ծանուցանէ իր քաղոյ յանախորդաց քե՝
ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս
քերէլ տուած է Զինական, Հնդկական եւ Սեյա-
նի ընտիր եւ հոսաւէս քեյեր, ունեց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է:

Կը վաճառէ նաեւ մազի հաւար ընտիր ներ-
կեր ամէն գոյնէ: Գիները յախաւոր:

Հետեւեալ գիրքերը կը ծխաւորին Տիար Կա-
րապէտ Աստուածատի քով: ԵՆԵՐԺ ԲԱՇԱ:

Փիլիկ Աղբոր Հարսնիք	որշ. որջ
Այիկէի Լէքայիւ, հայաստ եւ	1.5
Քրքաւառ գուարձալիքներ	8 " "
Գրական Երազանք	50 սնդի
Գագան Դօնա, գովեսի	20 փրջ
Մահմուդիքիւ Միսեմաւար	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱՆԵԱՆ

Տպագրական ամէն տեսակ գործերու կաշուա-
նիս, փորագրի, քե տնտակ եւ քե պրիմա վրայ,
կը պատրաստուին նաեւ վաճառականական կնի-
քներ՝ մեքենայ եւ քաղաք:

Աղեքսանդրիա, Ծրանի փողոց քի 22